«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Կ Ա Ռ Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման ՝Սովորողների մեջ ինքնուրույն նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

՝

Առարկան՝ պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Հովյաննիսյան

Ուսումնական հաստատություն՝ Ռոմիրալ Իսակովի անվան հ. 132 հ/դ

Երևան 2022

`

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 4
1.1 Դպրոցականների մտավոր կարողությունների զարգացման մանկավարժական պայմանները 4
1.2 Դպրոցականների մտավոր զարգացման մեթոդները 7
ԳԼՈՒԽ 2. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ 10
Դպրոցականների մտավոր զարգացման հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները 10
. Դպրոցականների մտավոր զարգացման գործընթացի խթանումը 13
2.3.Հետազոտական աշխատանք՝ դպրոցականների մտավոր կարողությունների զարգացման
ուղղությամբ 15
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջան, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Դպրոցական տարիքում առաջատար է հանդիսանում ուսումնական գործունեությունը :Որպեսզի գիտակցենք իմացաբանական գործունեության կատեգորիան, պետք է իմանալ նրա հստակ կառուցվածքը: Ուսուցման կառուցվածքի մեջ են մտնում այն նույն բաղադրիչները, որոնք մտնումեն ցանկացած գործունեության մեջ: Դրանք են՝ նպատակը, մոտիվները, գործողությունը, արդյունքը, գնահատականը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, այժմ ժամանակակից դպրոցներում խնդիր է դրվում ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն առավելագույն չափով ապահովի դպրոցականների մտավոր զարգացումը: Դրա համար էլ սովորաբար խոսում են ոչ թե պարզապես ուսուցման, այլ զարգացնող ուսուցման մասին:

Հետազոտության ուսումնասիրության նպատակն է ուսումնասիրել մանկավարժի աշխատանքը դպրոցականներիի մտավոր զարգացումը խթանելու ուղղությամբ:

Աշխատանքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ 1.Մանկավարժական գրականության ուսումնասիրության մեթոդ:2.Սոցիոլոգիական հարցման մեթոդ:

3.Արդյունքների վերլուծություն մեթոդ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, իրենց համապատասխան ենթագլուխներից, որտեղ ուսումնասիրվում է դպրոցականի մտավոր զարգացման բնութագիրը և մանկավարժական պայմանները, նրանց մտավոր զարգացման մեթոդները, ինչպես նաև դպրոցականի մտավոր զարգացման հոգեբանամանկավարժական առանձնահատկություններն ու դպրոցականների մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Աշխատությունը ամփոփվում է եզրակացությունով և օգտագործված գրականությանցանկով:

ԳԼՈՒԽ 1. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1 Դպրոցականների մտավոր կարողությունների զարգացմանմանկավարժական պայմանները

Արդի ժամանակներում երբեք չի կարելի ուսուցումը մեկնաբանել որպեսսովորողների մեջ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի ձևավորում: Այժմ խնդիր է դրվում ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն առավելագույն չափով ապահովի դպրոցականների մտավոր զարգացումը: Դրա համար էլ սովորաբար խոսում են ոչ թե պարզապես ուսուցման, այլ զարգացնող ուսուցման մասին:

Դպրոցական տարիքում առաջնային պլան է մղվում մտածողության զարգացումը: Այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն: Առաջին տարիներին այն դեռևս պատկերավոր բնույթ է կրում, սակայն ուսումնական գործունեությունը խթանում է վերացական մտածողության զարգացումը, երբ հստակ արտաքին առարկաների հետ գործ ունենալուց երեխան անցնում է մտավոր պլանում գործողությունների կատարմանը: Կարևոր դեր են խաղում գիտական հասկացությունների ձևավորումը, որն ընթանում է գործառույթային հատկանիշների առանձնացումից մինչև էական հատկանիշների առանձնացումը: Գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները: [Эльконин 1995: 137]:

Դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի խոսքը: Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում/, ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ, ձևավորելով բավարար բառապաշար, ձևավորելով գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջմունք և այլ [Выготский 1996: 139]:

Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր,երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է:

Այսպիսով, կարելի է փաստել, որ դպրոցական տարիքում երեխաները ունենումեն հետևյալ ձեռքբերումները՝

իմացական ոլորտի զարգացում

աֆեկտիվ-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով;

հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում

երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում [Էլոյան 1980: 125] :

Այսպիսով՝ դպրոցական ուսուցումը կառուցվում է այնպես, որ դպրոցականի մտածողությունը նկատելիորեն զարգանում է: Եթե դպրոցական առաջին տարիներին երեխաները շատ աշխատում են ակնառու պատկերներով, ապա հաջորդդասարաններում նրանց ծավալը կրճատվում է:

Ուսուցման գործընթացում գիտական հասկացությունների համակարգիյուրացումը հնարավորություն է տալիս խոսելու դպրոցականների տեսական մտածողության հիմքերի մասին: Տեսական մտածողությունն օգնում է դպրոցականին լուծելու խնդիրներ՝ կողմնորոշվելով ոչ միայն օբյեկտների արտաքին, ակնառու հատկանիշների և կապերի վրա, այլ ներքին հարաբերությունների և հատկությունների վրա: Տեսական մտածողության զարգացումը կախված է նրանից, թե ինչ և ինչպես են սովորեցնում երեխային, այսինքն՝ ուսուցման տեսակից:

Բացի ուսուցման համակարգի կառուցումից՝ կարևոր է նաև ուսումնական գործընթացի կազմակերպման ձևը: Արդյունավետ է երեխաների համագործակցությունը ուսումնական խնդիր լուծելիս: Ուսուցիչը, կազմակերպելովաշակերտների համատեղ աշխատանքները, դրանով իսկ կազամակերպում է նրանց գործնական շփումը:

Ինչ վերաբերում է հենց մտածողության զարգացմանը, ապա աշակերտների համագործակցությունն անհնարին է առանց իրենց տեսակերտների կորդինացման, խմբի ներսում ֆունկցիաների և գործողությունների բաշխման, ինչի շնորհիվ երեխաների մոտ ձևավորվում են համապատասխան ինտելեկտուալ կարողություններ [Սարգսյան 2001: 69]:

Երեխաների ընդհանուր զարգացման ենթատեքստում առանձնակի դեր ունեն հոգեկան զարգացման չափորոշիչները, որոնք հնարավորություն են տալիս ճանաչել երեխայի ընդունակությունների, հմտությունների և կարողությունների համապատասխանությունը տարիքային տվյալ փուլին: Երեխաների ընդհանուր զարգացման գնահատումը մի ամբողջական համակարգ է, որը հնարավորություն է տալիս բացահայտել հոգեկանի զարգացման մակարդակը [Рубинштейн 1989: 73] :

Հայտնի է, որ երեխայի մտավոր զարգացումն ապահովող հիմնական բաղադրիչները (իմացական գործընթացներ, տեղեկացվածություն, բառապաշար և այլն) կարող են ձևավորվել ոչ միայն քայլ առ քայլ, այլ թռիչքով: Ոմանց մոտ հոգեկանն ֆիզիկական զարգացումը կարող է արագ ընթանալ, մյուսների մոտ՝ դանդաղ: Սակայն կրթական միջավայրում, որտեղ երեխաները հայտնվում են խմբերում, առաջ են գալիս իմացական գործընթացների խթանման և կարգավորման նոր խնդիրներ:

Հոգեբանամանկավարժական գնահատումը լավագույն հիմք է նման խնդիրների լուծման համար: Այն կարող է ծառայել շտկողական աշխատանքների պլանավորմանն ու իրականացմանը, որոնք նույնպես պետք է կատարվեն ծնողի և առարկայական մանկավարժների հետ համագործակցման ճանապարհով: Ըստ էությանչափորոշիչների դերը միայն զարգացման գնահատումը չէ, այլ այն հիմնականում ունի ուղղորդիչ դեր, այսինքն այն տեղեկությունները, որոնք երեխայի հետ անմիջական շփվողը ստանում է չափորոշիչներից, հիմք են ծառայում երեխայի հնարավորությունների բազմակողմանի ճանաչմանը և նպաստում նրա ինտենսիվզարգացմանը: Բնականաբար դպրոց մտնող երեխայի համար մտավոր զարգացման համապատասխանությունը դեռ բավարար չէ, ցանկալի է, որ լինի ձգտում ուսումնառությանը, հետաքրքրություն գրագիտությանը, նաև՝ որոշակի վերաբերմունք աշակերտի սոցիալական կարգավիճակին, այն է՝

ա/ ենթարկվել հրահանգներին,բ/ հսկել սեփական վարքը,

գ/ ֆիզիկապես դիմակայել ռեժիմին,

դ/ ունենալ հաղորդակցման հմտություններ,

ե/ իրականացնել ինքնասպասարկումը [Эльконин 1975: 83] :

Այսպիսով՝ ամփոփելով վերը շարադրվածը կարելի է ասել, որ ուսումնական գործընթացը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումըենթադրում է աշակերտի ինքնակառավարում, ինչն էլ նպաստում է նրանց մտավոր զարգացման խթանմանը, իսկ մանկավարժի աշխատանքը պետք է անընդհատ ուղղված լինի աշակերտներին սովորեցնել վերլուծության, առարկաների հատկությունները համեմատելու, էականը առանձնացնել և այդ բառը ճիշտ արտասանել: Անհրաժեշտ է սովորեցնել կենտրոնացնել ուշադրությունը ուսումնական գործունեության առարկաների նկատմամբ անկախ արտաքին գրավչությունից:

1.2 Դպրոցականների մտավոր զարգացման մեթոդները

Ուսուցման գործընթացում մտավոր զարգացման բարձրացման խնդիրը որոշվում է ինչպես ուսումնական նյութի բովանդակության ընկալման միջոցով,այնպես էլ այնպիսի ճանաչողական գործունեության կազմակերպման միջոցով, որի ժամանակ ուսուցանվողները կներգրավվեն հիմանկան մտածողական գործողությունների և ուսումնական գործողությունների կատարման մեջ, որոնք կնպաստեն այս կամ այն ինտելեկտուալ ունակությունների ձևավորմանը:

Տեսական կողմից ուսուցման մեթոդիկայի հիմնավորումը, որն ուղղված է մասնակիցների մտավոր զարգացմանը, իր արտացոլումն է ստացել «զարգացող ուսուցում հայեցակարգում: Այս հայեցակարգն ըստ էության պետք է մեկնաբանվի ավելի լայն իմաստով, ներառելով ոչ միայն մտավոր ուժի և ճանաչողական հետաքրքրությունների զարգացումը, այլ նաև ուրիշ ունակություններ ու անհատական կողմեր:

Այս հայեցակարգը դրված էր դպրոցականների ուսուցման մեթոդիկայի և բովանդակության վերակառուցման հիմքում: Զարգացող ուսուցման հայեցակարգը ուսուչիցներին կողմնորոշում է ակտիվ աշխատանք ծավալել մասնակիցների հետ, քանի որ նրա ջանքերից և մանկավարժական ստեղծագործությունից է կախված յուրաքանչյուր աշակերտի մտավոր զարգացումը և ինտելեկտուալ հնարավորությունները [Давыдов 1986: 115]:

Զարգացող ուսուցման միջոցների և մեթոդների ընտրությունը, բովանդակության ճիշտ մեթոդական մատուցումը դա ուսուչցի ճիշտստեղծագործական մոտեցման ոլորտն է, որը զգտում է աշակերտների մոտ ձևավորել ակտիվ մտածողության աշխատանքներ դասերի ժամանակ, որը կապահովի նրանց ընդհանուր մտավոր զարգացումը:

Դպրոցականների մտավոր զարգացման խնդիրները կարևոր հոգեբանամանկավարժական խնդիրներից մեկն է: Արդարացիորեն համարվում է, որ դրանց լուծման գլխավոր ճանապարհը դա ողջ ուսումնական գործընթացի ռացիոնալ կազմակերպումն է: Որպես օժանդակող, լրացնող ճանապարհ կարող է դիտարկվել մտածողության հատուկ կազմակերպված խաղային վարժանքները [Зак, 996 г. 105]:

Կարելի է ասել, որ ցանկացած մտածողական գործընթացի ամբողջական ընթացքի ընդհանուր հիմք հանդիսանում է նվազագույնը երեք ունիվերսալ մտածողության բաղադրիչների առկայությունը՝

Տարրական մտածողական գործողությունների ձևավորման բարձրմակարդակը, դրանք են՝ վերլուծությունը, սինթեզը, համեմատությունը, էականը մյուսներից տարբերելը

Մտածողության ակտիվության, անկաշկանդության և բազմակարծության բարձր մակարդակը, որն արտահայտվում է մեծ քանակությամբ տարբեր հիպոթեզների արտադրողականության մեջ

Մտածողության նպատակաուղղվածության և կազմակերպվածության բարձր մակարդակը, որն արտահայտվում է երևույթներում էականի հստակ կողմնորոշում, օգտագործելով երևույթների վերլուծության համընդհանուր սխեմաները[Выготский 1996: 146]:

Դպրոցականների կրթության հիմնական խնդիրը դա երեխայի անհատականության զարգացման ապահովումն է առավել բարձր մակարդակով համեմատած նրանց նախադպրոցական տարիքի հետ:

Դպրոցական երեխայի լիարժեք զարգացման աղբյուր է հանդիսանումգործունեության երկու տեսակ: Առաջին՝ ցանկացած երեխա զարգանում է մարդկության անցած փորձի յուրացման չափով, նրա ժամանակակից մշակույթի հետ հարաբերության հաշվին: Այս գործընթացի հիմքում ընկած է կրթական գործունեությունը, որն ուղղված է երեխայի կողմից գիտելիքների տիրապետմանը, որոնք անհրաժեշտ են հասարակության մեջ ապրելու համար:

Երկրորդ՝ ցանկացած երեխա զարգացման ընթացքում ինքնուրույն յուրացնում էիր հնարավորությունները իր ստեղծագործական գործունեության շնորհիվ: Ի տարբերություն կրթական գործունեության, ստեղծագործական գործունեությունը հիմնված չէ արդեն հայտնի գիտելիքների յուրացման վրա: [Выготский 1996: 146]

Այն նպաստում է երեխայի ինքնագործունեության, ինքնաիրացման, իր սեփական գաղափարների մարմնավորման բացահայտմանը, որոնք ուղղված են նորը ստեղծելուն:

Իրականացնելով գործունեության նշված ձևերը, երեխաները լուծում են շատ խնդիրներ և տարբեր նպատակներով: Այսպես՝ ուսումնական գործունեությանժամանակ լուծվում են ուսումնավարժական խնդիրներ նրա համար, որպեսզի տիրապետեն որևէ գիտելիքի, յուրացնեն այս կամ այն կանոնները:

Ստեղծագործական գործունեության ժամանակ լուծվում են գիտաստեղծագործական խնդիրներ, նպատակ ունենալով զարգացնելու երեխայի ունակությունները: Դրա համար, եթե ուսումնական գործունեության գործընթացում ձևավորվում է ընդհանուր ունակություն սովորելու նկատմամբ, ապա ստեղծագործական գործունեության շրջանակներում ձևավորվում է ընդհանուր ունակություն փնտրելու և գտնելու նոր լուծումներ, ոչ սովորական միջոցներ ձեռք բերելու պահանջվող արդյունքը, նոր մոտեցումները դիտարկվող իրավիճակին [Ներսիսյան 2002: 73]:

ԳԼՈՒԽ 2. ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄՏԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՄԱՆԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Դպրոցականների մտավոր զարգացման հոգեբանամանկավարժականառանձնահատկությունները

Ուսումնական գործունեության ընթացքում ուսուցիչը հանդիպում է այն փաստին, որ յուրաքանչյուր աշակերտ ունի իր անհատական աշխատանքի ոճը, իր ուրույն բնավորությունն ու խառնվածքը, աշխատանքի տեմպը և այլն: Այդպիսի անհատական առանձնահատկությունների ընդունելն ու հաշվի առնելը օգտակար է ուսումնական դժվարությունների լուծման ժամանակ և խթանում է դպրոցականների մտավոր զարգացմանն ու ուսումնական գործունեությանը:

Խառնվածքի առանձնահատկությունների հանդեպ ուշադիր լինելը բավականաչափ օգտակար է մանկավարժի աշխատանքում: Մանկավարժը կարող է նկատել, որ իներտ երեխաների պատասխանները ավելի երկար են, նրանց ժամանակէ հարկավոր մտքերը հավաքելու, կանոնակարգելու համար, մինչդեռ շարժուն երեխաները տալիս են արագ, հակիրճ և հստակ պատասխաններ: Նրանք կարող են լսել ուսուցչին և միաժամանակ մեկ այլ գործ անել: Հատուկ ուշադրություն են պահանջում խոլերիկ և մելանխոլիկ երեխաները: Առաջիններին պետք է սովորցնել մեղմացնել իրենց բուռն հակազդումները, երկրորդներին պետք է մշտապես քաջարելել, վստահություն առաջացնել սեփական ուժերի նկատմամբ:

Իներտ երեխաների մոտ դժվարություններ են առաջանում երկարատև լարված աշխատանքի դեպքում, պատասխանատու իրավիճակներում՝ հարցում, քննություն, ստուգողական աշխատանք, մեծածավալ և տարաբնույթ ինֆորմացիայի հիշելու անհրաժեշտության դեպքում, աղմկոտ միջավայրում աշխատելիս:

Մանկավարժը, հաշվի առնելով տվյալ առանձնահատկությունները, կարող է օգտագործել հետևյալ միջոցները՝ տալ երեխային պատասխանելու և մտքերը հավաքելու ժամանակ, նյութը տրամադրել մաս-մաս, ժամանակ տրամադրել դրաամրապնդման համար, չկատարել հարցում նոր դասի վերաբերյալ, այլ իրականացնել դա մյուս դասին, ինքնավստահություն ձևավորել խրախուսանքների օգնությամբ, հարցում չանել դասի սկզբին, չընդհատել, չշտապեցնել, չխանգարել որևէգործունեություն կատարելիս:

Յուրաքանչյուր աշակերտ ունի իր նախընտրությունները նյութը ամրապնդելու, սովորելու համար: Դա կարող է լինել նյութի տեսողական, լսողական, կինեստետիկ ընկալում:

Հաճախ մանկավարժների ուշադրության կենտրոնում են դժվար երեխաները, սակայն դպրոցում սովորում են նաև բարձր ընդունակություններով օժտված երեխաներ:

Երեխայի ընդունակությունները պայամանավորում են այս կան այն գործունեության արդյունավետ կատարումը և չեն հանգեցվում նրա գիտելիքներին, կարողություններին և հմտություններին: Ընդունակությունները դրսևորվում և զարգանում են գործունեության մեջ: Գոյություն ունեն ընդհանուր և մասնավորընդունակություններ:

Ընդունակ աշակերտների հետ աշխատելիս ուսուցչի կարևորագույն խնդիրն է հայտնաբերել նրա ընդունակությունները, խրախուսել դրանք և ցուցաբերել անհատական մոտեցում դրանց պահպանման ու զարգացման համար: Նպատակահարմար է ձևավորել ինքնուրույնությունը, աշխատունակությունը, ստեղծարարությունը, աճի ձգտումը:

Երեխայի հոգեկան և անձնային զարգացման լիարժեքությունը, դրդապատճառների և պահանջմունքների, հետաքրքրությունների և հակումների, ստեղծագործական մտածողության, սոցիալական ակտիվության, բարոյական ինքնագիտակցության զարգացումը մեծապես կախված է մանկավարժի անձից և նրա արհեստավարժությունից: Ներկայիս կրթական կյանքի պահանջները, երբ առաջ են մղվում անձ-անձ փոխհարաբերությունների կարևորությունը և ի հայտ է գալիս կրթության հումանիզացիայի գործընթացը առավել կարևորում են մանկավարժի անձը: Մանկավարժական հոգեբանության մեջ ընդունված է առանձնացնել ուսումնական գործունեությանը նպաստող և օժանդակող հետևյալ կարևոր հասկացությունները՝ ուսուցչի անձ, գործունեությունը և մանկավարժական հաղորդակցումը [Зимняя 1999: 114] :

ԱՄՆ-ում իրականացված հետազոտությունները ցույց են տվել, որ <<լավ ուսուցիչ>> հասկացության մեջ նախ և առաջ ընդգծվում են հետևյալ կարևոր գործոնները՝

ապրումակցում

հստակություն, համակարգայնություն

ուսումնական նյութի այնպիսի մատուցում, որ խթանում է աշակերտներիստեղծագործական հնարավորությունների զարգացմանը

աշակերտների հանդեպ բարեհամբյուր մոտեցում

հուզական ստաբիլություն

խոսքի զարգացվծության բարձր աստիճան [Подласый,, 2008. 83]:

Որքան բազմազան կարող են լինել տարբեր հեղինակաների կողմից հետազոտված և առաջարկված ուսուցչի ընդհանուր ընդունակությունը, միանշանակկարելի է փաստել այն, որ առանցքային է համարվում երեխաների հանդեպ սերը, կապվածությունը նրանց հետ, նրանց հետ աշխատելու ձգտումը /նույնիսկ կենսական պահանջը/: Այս ամենը դրսևորվում է երեխաների հետ աշխատանքում ուսուցչի խորը բավարարվածությամբ, մանկավարժական շփման, նրբանկատության, անկեղծության և անմիջականության մեջ:

Այսպիսով, կարելի է նկատել, թե որքան են կարևորվում ուսուցչի անձը և նրաշփման հմտությունները ուսումնական գործընթացում, մասնավորապես դպրոցականի մտավոր զարգացման խթանման գործում, քանի որ անհրաժեշտ անձնային որակների, մասնագիտական հմտությունների առկայության, ինչպես նաև արդյունավետ շփման, կառավարման ոճի շնորհիվ կարելի է խթանել դպրոցականի մտավոր զարգացումը,իսկ հակառակ դեպքում սահմանափակել այն:

. Դպրոցականների մտավոր զարգացման գործընթացի խթանումը

Ցանկացած ուսումնական ծրագիր դատապարտված է անհաջողության, եթե այն կիրառելիս մանկավարժը չի օգտագործում այնպիսի հոգեբանական միջոցներ, որոնք խթանեն աշակերտի մեջ ուսման հանդեպ հետաքրքրության առաջացման գործընթացը:

Հետաքրքրությունը, որպես շարժառիթ, չափազանց մեծ դեր է կատարում ուսուցման մեջ: Այն ձևավորվում է ուսուցման գործընթացում և միաժամանակ յուրաքանչյուր ուսուցչի համար ամենագործուն միջոցներից մեկն է՝ գիտելիքների որակը բարձրացնելու և դպրոցականների մեջ ուսման նկատմամբ դրական վերաբերմունք դաստիարակելու հարցում [Эльконин 1995: 94]:

Սովորողների մեջ հետաքրքրություն է ձևավորվում ոչ միայն ուսումնական նյութի կամ առանձին ուսումնական դիսցիպլինների բովանդակության, այն գլխավորապես գիտելիքներ ձեռք բերելու բուն պրոցեսի հանդեպ: Դպրոցականներին պետք է հետաքրքիր լինի սովորելը՝ ուսումնասիրելն ու ինքնուրույն եզրակացություններ անելը, խնդիրներ լուծելու ընդհանուր եղանակներին տիրապետելը, պրակտիկ աշխատանքներ կատարելը, ինչպես նաև այդ աշխատանքից ստացված փաստերի արդյունքներն ընդհանրացնելը:

Շատ մանկավարժներ դպրոցականների մտավոր զարգացման խթանման միջոց առաջարկում են խաղը: Խաղին հատուկ կարևորություն է տրվում վաղ դպրոցականն նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցման, դաստիրակության և մտավոր զարգացման գործում, քանի որ, ըստ հոգեբանների, այդ տարիքն առանձնանում է որպես անհատականության ձևավորման առաջին աստիճան: Այդ տարիքում խաղն է անձի ձևավորման կարևորագույն միջոցը, գործոնը: Ուստի մանկավարժության մեջ մեծ կարևորություն է տրվում ուսուցման ընթացքում խաղի դերին և ուսուցումը խաղի օգնությամբ կազմակերպելուն [Սարգսյան 2001: 29]:

Ուսուցանող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, սևեռում են երեխայի անկայուն ուշադրությունը դասի ընթացքին, տալիս են նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել: Խաղերը երեխաներից պահանջում են հնարամտություն, ուշադրություն, համատեղ ստեղծագործական համառություն, զարգացնում են երևակայությունը, արագորեն ճիշտ լուծումներ գտնելու կարողությունները:

Խաղի ընթացքում մեծ տեղ պետք է հատկացնել հետաքրքրաշարժ խնդիրներինու առաջադրանքներին, որոնց հիմնական նպատակը սովորածը կրկնելու, ամրապնդելու և կիրառելու կարողությունների ձևավորումն է: Բազմազան մանկավարժական, տրամաբանական, հետաքրքրաշարժ վարժությունները երեխաները կատարում են սիրով ու հափշտակությամբ: Նրանք ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ լուծում են, վճռում, գտնում, կազմում, հորինում, առանձնացնում և այլն: Իսկ այդ ընթացքում երեխաները կամա-ակամա սովորում են այն ամենը, ինչը ծրագրված և թաքնված է այդ առաջադրանքների հետևում:

Խաղերը միայն դասը հետաքրքրաշարժ, զվարճալի ու բազմերանգ դարձնելու համար չեն միայն, դրանք առաջին հերթին ուսանելի են և նոր գիտելիքներ են հաղորդում, սովորեցնում միտքը լարել, տրամաբանել: Խաղերը զարգացնում են երեխայի երևակայությունը, արագորեն լուծումներ գտնելու կարողությունը, համակցված մտածողությունը [Выготский 1996: 127]:

Դպրոցականների մտավոր զարգացման համար անհրաժեշտ է աշակերտներին հաճախակի դնել այնպիսի խնդրահարույց իրավիճակներում, որոնց մեջ նրանցից պահանջվի հետազոտական մոտեցում: Հարկավոր է այնպես կազմակերպել պարապմունքները, որ աշակերտների մեջ ծագեն ոչ միայն պրոբլեմային հարցեր, այլև դրանք ինքնուրույնաբար լուծելու ձգտում: Ստեղծագործական մտածողությունը հետազոտական գործընթացի հիմնական բաղադրամասն է, երբ աշակերտն ինքն է բացահայտում, ինքն է գտնում պրոբլեմի լուծման մինչ այդ իրեն անհայտ ուղին[Էլոյան 1980: 97] :

Խնդրի նկատմամբ ճիշտ մոտեցումը սկսվում է նրանից, որ ճանաչողության գործընթացում աշակերտի մեջ ծագում է դժվարություն. նա չի կարողանում նախկինում յուրացրած գիտելիքների միջոցով բացատրել նոր, իրեն հետաքրքրող փաստերն ու երևույթները: Ինքն՝ աշակերտն է ձգտում գտնել կամ յուրացնել նոր տեղեկություններ, գործողության նոր եղանակներ, որպեսզի վերացնի տվյալ երևույթը հասկանալու ընթացքում առաջացած հակասությունը: Դասի ժամանակ ճանաչողական պահանջմունք առաջացնել՝ նշանակում է ստեղծել պրոբլեմային իրադրություն: Աշակերտին խնդրի լուծման գործընթացի մեջ ներգրավելու համար անհրաժեշտ է նաև պրոբլեմի հստակ սահմանումը, նրա ձևակերպումը, իսկ այնուհետև, ստեղծելու համար վարկածների առաջքաշում՝ դրանց ստուգում ու հիմնավորում:

Այստեղից հանգում ենք այն եզրակացության, որ ոչ միայն ստեղծագործական, այլև ինքնուրույն մտածողության զարգացումը պահանջում է պարապմունքների այնպիսի կազմակերպում, երբ գիտելիքները տրվում են ոչ թե պատրաստի վիճակում, այլ մեծ մասամբ աշակերտները դրանք ձեռք են բերում ինքնուրույնաբար:

Այսպիսով՝ դպրոցականների մտավոր զարգացման գնահատումը մի ամբողջական համակարգ է, որը հնարավորություն է տալիս բացահայտել նրանց հոգեկանի զարգացման մակարդակը և այն համակցել համապատասխան տարիքի հետ:

Հետազոտական աշխատանք՝ դպրոցականների մտավոր կարողություններիզարգացման ուղղությամբ

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել ուսուցչի աշխատանքի կարևորության ըմբռնումը՝ դպրոցականների մտավոր կարողությունների զարգացման գործում: Պարզել՝ արդյո՞ք որքանով է մանկավարժի աշխատանքը ուղղված աշակերտների մտավոր կարողութունների զարգացմանը:

Հետազոտության խնդիրն է բացահայտել՝

դպրոցում մանակավարժական աշխատանքի կատարմանինքնատիպությունը դրսևորման ձևերը

ուսումնական գործընթացում կրած ազդեցությունը Հետազոտության ընթացքում կիրառվել է հետևյալ մեթոդը.

հարցում:

Հետազոտությունը կատարվել է թիվ 169 հիմնական դպրոցում, մասնակցել են թվով 12 ուսուցիչներ: Հետազոտության շրջանակում առաջադրվել են ուսուցչի մանկավարժական հմտություններին վերաբերող հարցեր, որոնց տրվել են սահուն ևհստակ պատասխաններ:

Հետազոտական աշխատանքի արդյունքների վերլուծություն և ամփոփում.

Ուսուցիչների հետ անցկացված հետազոտության տվյալներիուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ուսուցիչների մեծամասնության աշխատանքըխորապես միտված է աշակերտների մտավոր կարողությունների զարգացմանը և կիրառմանը պրակտիկայում:

Հարցում ուսուցիչների շրջանում.

Գծապատկեր 1.

Ինչպե՞ս եք գնահատում դպրոցական տարիքում մտածողության զարգացման առաջնային պլան մղման գաղափարը։



Հարցման մասնակիցների 64%-ը դպրոցական տարիքում մտածողության զարգացման առաջնային պլան մղման գաղափարը գնահատում է գերազանց, համարելով այն անձի ձևավորման հատկանշական հիմք։ 25%-ի կարծիքով գաղափարը իսկապես կարևոր է, սակայն ունի զարգացման այլ ձևերի հետ զուգորդման կարիք։11%-ը որևէ կարծիք չարտահայտեց։

Գծապատկեր 2.

Ինչպե՞ս կարող է մանկավարժն օժանդակել դպրոցական տարիքում սովորողների խոսքի և մտածողության ինտենսիվ զարգացմանն ու հարստացմանը։



Հարցման մասնակիցների 75%-ի կարծիքով, նշված երկու տարբերակներն էլ իրենցմեջ ներառում են հասկացության բովանդակությունը և օժանդակման հիմնարար

միջոցներ են համարվում : 17%-ի կարծիքով մեծամասամբ խոսքային հարուստ միջավայրի ստեղծումը կնպաստի սովորողների մտածողության զարգացմանը: 10%-ը՝ բանավեճերի, քննարկումների և զրույցների կողմնակիցն է:

Գծապատկեր 3.

Համագործակցու՞մ եք արդյոք հատուկ մանկավարժի, լոգոպեդի և հոգեբանի հետսովորողների մտածողության զարգացման գործընթացի շրջանակներում:



Հարցման մասնակիցների 64%-ը սովորղների մտածողության զարգացման գործընթացը կազմակերպում է հատուկ մանկավարժի, լոգոպեդի և հոգեբանի հետ զուգընթաց: 25%-ը մեծամասամբ ինքնուրույն կերպով է իրականացնում գործընթացը, երբեմն դիմոլով հատուկ մանկավարժի, լոգոպեդի կամ հոգեբանի օգնությանը: 11%-ը՝ ամբողջապես ինքնուրույն է կազմակերպում սովորղների մտածողության զարգացման գործընթացը:

Գծապատկեր 4.

Սովորողների խառնվածքի առանձնահատկությունների հանդեպ ուշադիր լինելըարդյո՞ք բավականաչափ օգտակար է մանկավարժի արդյունավետ աշխատանքի կազմակերպման համար:



Հարցման մասնակիցների 88%-ը գտնում է, որ միայն սովորողների խառնվածքի առանձնահատկությունների հանդեպ ուշադիր լինելը բավականաչափ չէ մանկավարժական արդյունավետ աշխատանքի կազմակերպման համար : 12%-ի կարծիքով արգասաբեր աշխատանքի կատարման համար վերոհիշյալ նախապայմանը բավարար է։

Գծապատկեր 5.

Ի՞նչն եք առավել կարևորում, որպես ուսուցիչ, Ձեր կատարած աշխատանքում։



Հարցման մասնակիցների 100%-ը ուսուցչի աշխատանքում կարևոր համարեցիննշված բոլոր պատասխանները։

Այսպիսով, ուսուցիչների շրջանում «Մանկավարժի աշխատանքը դպրոցականների մտավոր զարգացման ուղղությամբ» թեմայով անցկացված հետազոտական աշխատանքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսուցչի կողմից իրականացվող գործընթացների խորքային ուսումնասիրումը, մասնավորապես դպրոցականների մտավոր զարգացման խթանման գործում, պայմանավորվում է անձնային որակների, մասնագիտական հմտությունների առկայության, ինչպես նաև արդյունավետ շփման, կառավարման ոճի ճիշտ ընտրությամբ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատելով տվյալ թեմայի շուրջ՝ եկանք հետևյալ եզրահանգումների.

Մանկավարժները դասարաններում պետք է կազմակերպենպարբերաբար դասեր, որի ժամանակ ցանկացած երեխա՝ լինելով տարբեր ինտելեկտուալ պատրաստվածության, ասենք և թույլերը և ուժեղները կարողանան լուծել ոչ տիպային, որոնողաստեղծագործական խնդիրներ, որոնք կապված չեն լինի ուսումնական նյութի հետ:

Աշակերտների հետ աշխատելիս ուսուցչի կարևորագույն խնդիրն է հայտնաբերել նրա ընդունակությունները, խրախուսել դրանք և ցուցաբերել անհատական մոտեցում դրանց պահպանման ու զարգացման համար: Նպատակահարմար է դպրոցականի մոտ ձևավորելինքնուրույնությունը, աշխատունակությունը, ստեղծարարությունը, մտավոր զարգացման աճի ձգտումը:

Եվ վերջապես պետք է ընդունենք, որ ուսուցանվող խաղերը, հետաքրքրաշարժ առաջադրանքները, սևեռում են երեխայի ուշադրությունը դեպի այդ խաղերն ու առաջադրանքները, հաղորդելով նրանց նոր գիտելիքներ, ստիպում են լարված մտածել, որն էլ նպաստում է դպրոցականների մոտ մտավոր զարգացման խթանմանը:

Դպրոցականների մտավոր զարգացման համար անհրաժեշտ է աշակերտներին հաճախակի դնել այնպիսի խնդրահարույց իրավիճակներում, որոնց մեջ նրանցից պահանջվի հետազոտական մոտեցում: Հարկավոր է այնպես կազմակերպել պարապմունքները, որ աշակերտների մեջ ծագեն ոչ միայն խնդրահարույց հարցեր, այլև նրանց մոտ առաջանա դրանք ինքնուրույնաբար լուծելու ձգտում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Բալյան Ա.Ա., Մանկավարժական հոգեբանության հարցեր, Երևան, 1983թ.:

Էլկոնին Դ.Բ., Դպրոցականի ուսուցման հոգեբանություն, Երևան, 1975թ.:

Էլոյան Տ.Ս., Ուսուցիչը և նրա գործունեության հոգեբանական առանձնահատկությունները, Երևան, 1980թ.:

Ներսիսյան Ս.Ռ., Անձի ստեղծագործական դրսևորումները որպես հոգեբանա-մանկավարժական խնդիր, 2002թ.:

Սարգսյան Վ., Խաղը և ուսուցումը, 2001թ.:

Адлер А. “Воспитание детей”, Ростов-на-Дону, 1998.

Выготский Л.С. “Мышление и речь”, 1996.

Давыдов В.В. “Проблемы развивающего обучения: опыт теоретического и экспериментального психологического исследования”, 1986.

Зак А.З. “Развитие интеллектуальных способностей у детей 6 - 7 лет”, 1996.

Подласый И.П. “Педагогика начальной школы”, 2008.

Рубинштейн С.А. “ Основы общей психологии”, 1989.